ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

# ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու անդամների կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Հայկազ Խաչիկյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 17-ի թիվ 62-Ն որոշմամբ

ԱԽԹԱԼԱ 2016

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

# ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ
# 2017-2021
# ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու անդամների կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Հայկազ Խաչիկյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 17-ի թիվ 62-Ն որոշմամբ

ԱԽԹԱԼ Ա 2016

Հապավումների ցանկ

| | |
|---|---|
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՏԿԶՆ | Տարածքային կառավարման և զարգացման |
| ՏԿԱԻՆ | Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն |
| ԳՄՀԸ | Գերմանիայի Միջազգային համագործակցության |
| ԱՄՆ ՄԶԳ | Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն |
| ՀՖՄՀԿ | «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպություն |
| ՏԻ | Տեղական ինքնակառավարում |
| ՏԻՄ-եր | Տեղական ինքնակառավարման մարմիններ |
| ՄԺԾԾ | Միջնաժամկետ ծախսերի ծրագիր |
| ՄԶԾ | Մարզային զարգացման ծրագիր |
| ՏԶ | Տարածքային զարգացում |
| ՏԶԾ | Տարածքային զարգացման ծրագիր |
| ՀԶՀԾ | Համայնքի զարգացման հնգամյա ծրագիր |
| ՀԶՔԾ | Համայնքի զարգացման քառամյա ծրագիր |
| ՀՏԶՀ | Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ |
| ԽՄ | Խորհրդակցական մարմին |
| ՀԱԽ | Համայնքային աշխատանքային խումբ |
| ՀԿՏՀ | Համայնքի կառավարման տեղեկատվական համակարգ |
| ՈՒԹՀՎ | Ուժեղ կողմեր, թույլ կողմեր, |
| ՔՀՄՀ | Քաղաքացիական հասարակություն և մասնավոր |
| ՀՈԱԿ | Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն |
| ՆՈՒՀ | Նախադպրոցական ուսումնական հաստատություն |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՔԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53- րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՖՄ ՀԿ փորձագետների կողմից մշակված և ՀՀ ՏԿԱԻՆ կողմից 2014 թվականին հավանության արժանացած՝ «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանությունը» (այսուհետ՝ Մեթոդաբանություն):

ՀԶՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- Համայնքում առկա ենթակառույցները և մատուցվող հանրային ծառայությունները.
- համայնքի առանձնահատկությունները.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է նաև ՀԶՀԾ-ի մշակմանը մասնակցած՝ համայնքի ՀԱԽ–երի կողմից կատարված աշխատանքով և առաջարկություններով, համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ, ինչպես նաև այն իրողությամբ, որ համայնքը գտնվում է ՀՀ կառավարության, միջազգային դոնոր և տեղական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում և, այս առումով, մեծացել է համայնքի զարգացմանը և առկա խնդիրների լուծմանը նրանց ներգրավելու հնարավորությունները: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքի հանրային ծառայությունների մատչելիությանը և հասանելիությանը, նոր ծառայությունների մատուցմանը վերաբերող և դրանցով պայմանավորված՝ լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները, համայնքի համաչափ զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլ բնագավառների) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում

աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը) և դրանց կառավարման միջոցառումները:

ՀԶՀԾ-ն մշակելիս ուսումնասիրվել է նաև նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման ծրագիրը, միտումները և դրա շարունակականության հնարավորությունները:

Համայնքի 2017-21թթ. ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶՀԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, ՔՀՄՀ կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

**ՀԶՀԾ-ի 1-ին բաժինը** ներառում է՝ համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր, բնակավայրային և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը՝ հաշվի առնելով ՀԶՀԾ-ի մշակման մեթոդաբանական չափանիշների ազդեցությունը համայնքի ՏԻՄ-երի գործունեության ոլորտների կազմի վրա, համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ֆիզիկական վիճակի գնահատումը, դրանց շահագործման, պահպանման և նորոգման հետ կապված խնդիրները: Համայնքի ընդհանուր և ոլորտային կարիքների գնահատման հիման վրա, կազմվել է համայնքում առկա հիմնախնդիրների ցանկը՝ առանձնացնելով նրանք, որոնց լուծումը նպատակահարմար է ներառել սույն ՀԶՀԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից: 1-ին բաժնում ներառվել է նաև համայնքի ՈՒԹՀԿ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

**ՀԶՀԾ-ի 2-րդ բաժինը** ներառում է՝ համայնքի երկարաժամկետ տեսլականը, զարգացման ռազմավարությունը և սույն ՀԶՀԾ-ի հիմնական նպատակները:

**ՀԶՀԾ-ի 3-րդ բաժինը** ներառում է՝ պետության, միջազգային և տեղական, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ կազմակերպությունների կողմից համայնքում գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական, մարզային, տարածաշրջանային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերն ու միջոցառումները:

**ՀԶՀԾ-ի 4-րդ բաժինը** ներառում է՝ համայնքի ֆինանսական վիճակի

վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական դրամաշնորհներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային տվյալները:

**ՀԶՀԾ-ի 5-րդ** բաժինը ներառում է՝ ՀԱԽ-երի կողմից, առաջարկված առաջնահերթ ոլորտային ծրագրերի ցանկը, ապա՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից համայնքի զարգացման ոլորտային ծրագրերի ընտրությունը, դրանց առաջնահերթությունների սահմանումը՝ ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, բացահայտված կարիքներից ու հիմնախնդիրներից, ենթակառուցվածքների վիճակից և ՀԶՀԾ-ի հիմնական նպատակներից:

Բաժնում ձևակերպվել և ամփոփվել են ՀԶՀԾ-ում ներառվող ոլորտային ծրագրերը՝ օգտագործելով դրանց կազմման՝ Մեթոդաբանությունում բերված օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

**5-րդ բաժնում** ներկայացվում են նաև ՀԶՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերն՝ ըստ առաջիկա հինգ տարիների:

**ՀԶՀԾ-ի 6-րդ բաժինը** ներառում է՝ համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի օտարման հնգամյա ծրագիրն՝ ըստ առանձին տարիների:

**ՀԶՀԾ-ի 7-րդ բաժինը** ներառում է՝ ՀԶՀԾ-ի իրականացման մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման և քննարկման ձևաչափերը:

**ՀԶՀԾ-ի եզրափակումը** ներառում է՝ համառոտ մոտեցումներ և դրույթներ՝ ՀԶՀԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման, քննարկման և հաստատման գործընթացների վերաբերյալ:

**ՀԶՀԾ-ի հավելվածները** ներառում են՝

- համայնքապետարանի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը

1.ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆ ԽՈՍՔԸ



Ախթալան Հայաստանի Հանրապետության հնագույն և գեղատեսիլ համայնքներից մեկն է: Ախթալան միշտ եղել է տարածաշրջանի և հանրապետության առաջատար համայնքներից մեկը թե իր զարգացվածությամբ և թե իր զարգացման հեռանկարներով: Պատմական զարգացման ընթացքում համայնքը ավանային փոքր հանքարդյունաբերող համայնքից վեր է ածվել զարգացած, հարմարավետ և հեռանկարային համայնքներից մեկի: Սակայն այդ ամենը նախ և առաջ համայնքի հեռահար ռազմավարության կատարման հետևողականության և գիտակցության արդյունքն է: Սույն փաստաթուղթը հանդիսանում է համայնքի զարգացման հետագա հինգ տարիների / 2017-2021/ ծրագրային փաստաթուղթը:

Այս հնգամյա ծրագիրը համայնքի նպատակային զարգացման համար ձեռնարկվել իք քայլերի ամբողջությունն է, որը ներկայացնում է համայնքի առաջնահերթ խնդիրների արդյունավետ լուծումները և հնգամյա կայուն զարգացման ապահովումը:

**Առաջիկա հինգ տարիների համար համայնքն իր առջև խնդիր է դրել հասնել և համայնքը դարձնել հարմարավետ բնակիչների համար, հրապուրիչ ներդրողների համար և գրավիչ զբոսաշրջիկների համար**:

Սույն տեսլականի իրականացման համար համայնքը մշակել է մի շարք միջոցառումների իրականացման ծրագրեր, որի ամփոփումն էլ հենց հանդիսանում է համայնքի հնգամյա զարգացման սույն ծրագիրը:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի **ռազմավարությունն է՝**

- ապահովել բնակավայրի աստիճանական ինտեգրումն և համաչափ զարգացումը,
- համայնքում էկոլոգիապես մաքուր արտադրության աստիճանական զարգացում,
- համայնքի տարածքի համեմատական առավելությունների բացահայտում և առևտրայնացում, այդ նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ՔՀՄՀ-ի կազմակերպությունների համագործակցության շրջանակների ընդլայնում և ջանքերի մեկտեղում:
- համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով,
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- համայնքի բնակչության սոցիալ և տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, նախադպրոցական և դպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- համայնքի ՏԻՄ-երի, աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների աստիճանական հզորացում, տեղական ժողովրդավարության ամրապնդում, համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների հետևողական իրականացում,
- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների ներգրավվածության բարելավում՝ բնակիչների մասնակցության ձևերի ներդրման և զարգացման միջոցով,
- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում,
- համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների ներդրում և հետևողական կիրառում,
- նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:

Ծրագիրը կազմվել է Ախթալա համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման և ղեկավարման և ավագանու կողմից, համաձայն անցկացված բնակչության հարցումների, առաջարկությունների,

համայնքի տեսլականի իրականացման համար անհրաժեշտ մի շարք գործողությունների: Ծրագիրն անցել է հանրային քննարկում, ինչպես նաև ներկայացվել է համայնքի ավագանու հաստատմանը, որը համապատասխանաբար համայնքի ավագանու 2016թ դեկտեմբերի 17-ի թիվ 62-Ն որոշմամբ այն հաստատել է: Ինչպես կարելի է նկատել այն իրենից ներկայացնում է մասնակցային փաստաթուղթ ինչի համար ես հայտնում եմ իմ առանձնահատուկ շնորհակալությունը բոլոր ներգրավված կողմերին:

Հուսով եմ ներկայացված ծրագրերի տեսլականը մոտ ապագայում համատեղ ջանքերով կյանքի կկոչենք:

ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿԱԶ ԽԱՉԻԿՅԱՆ

## 2. **ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ** ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, **ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

### *2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

### ***ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ***

Ախթալա բնակավայրը 1921թ. հուլիսի 20-ի «ՀՍԽՀ վարչական վերաբաժանումների» դեկրետով եղել է Լոռու գավառի Ալավերդի գավառամասի կազմում, 1930թ. սեպտեմբերի 9-ից՝ Ալավերդու վարչական

շրջանի կազմում, որը կազմավորվել է Ալավերդու և Դսեղի գավառներից, 1969 թվից` Թումանյանի շրջանի կազմում: 1939թ. Ախթալան ունեցել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ, որի ավանային սովետին վարչատարածքային կարգով ենթարկվում էին (1971թ.) Ախթալայի առողջարանը, առողջարանին կից ավանը, Վերին Ախթալա գյուղը, Նեղոց գյուղը, Քարկոփ ավանը: 1995 թվից «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքով Ախթալա քաղաքատիպ ավանին տրվել է քաղաքի կարգավիճակ Լոռու մարզի կազմում: Այժմ Ախթալայի քաղաքային համայնքի կազմում են Ախթալա քաղաքը, Ախթալայի առողջարանը և դրան կից գյուղը:

Ախթալա քաղաքը Հայաստանի Հանրապետության գունավոր մետալուրգիայի կենտրոններից մեկն է: Հայկական լեռնաշխարհում գունավոր մետաղների ձուլումը հայտնի է եղել մ.թ.ա. III-II հազարամյակում (Մեծամոր), մշակվել են պղնձի, անագի, ոսկու հանքավայրեր (մ.թ.ա. IV-III դդ.): Պղնձի, ոսկու, բազմամետաղային հանքանյութերի մշակումը, երբեմն տևական ընդմիջումներով, շարունակվել է միջին դարերում և առավել բարձր զարգացման հասել XVIII դարի II կեսին, երբ 1763թ. Ախթալայի արծաթ-կապարի և 1770թ. Ալավերդու պղնձի հանքավայրերի բազայի վրա կառուցվեցին Ախթալայի արծաթ-կապարի և Ալավերդու, այնուհետև Շամլուղի պղնձաձուլական գործարանները:

1785. և 1795թթ. հանքն ավերվել է և փակվել: Հետագայում այն վերականգնել են հույն հանքափոր վարպետները, որոնք եկել էին Հերակլ II թագավորի օրոք, դեռևս 1760-ական թվականներին: 1887-1914թթ. հանքավայրը շահագործել են ֆրանսիացի ձեռնարկատերերը:

1905թ. դադարեցվել էր Ախթալայի արծաթ-կապարի հանքավայրի մշակումը պաշարների սպառման պատճառով:

1918-1920թթ. Հայաստանում գործող ձեռնարկությունների զգալի մասն ավերվել էր: Հեղկոմի 1921թ. հունվարի 11-ի դեկրետով երկրի հանքային արտադրությունն ու մետալուրգիական գործարանները ազգայնացվեցին: 1924թ. սկսեցին գործել Ալավերդու, Ղափանի պղնձաձուլական գործարանները, 1927 թվականին` Շամլուղի, Ալավերդու և Ղափանի հանքերը:

1960-1985թթ. ՀՍՍՀ գունավոր մետալուրգիան մեծ առաջընթաց ապրեց: 1967թ. շարք մտավ Ախթալայի հարստացման ֆաբրիկան:

1971-1975թթ. Շամլուղի պղնձի, Ախթալայի արծաթ-կապարի հանքերն ու հարստացուցիչ ֆաբրիկան ընդգրկվեցին Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի կազմի մեջ: Այժմ վերագործարկվել է Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկան:

**Աշխարհագրական դիրքը**

Ախթալայի քաղաքային համայնքն ընդգրկված է Լոռու մարզային ռեկրեացիոն գոտու Դեբեդի ենթագոտում: Ախթալան գտնվում է Լոռու մարզի հյուսիսարևելյան հատվածում` Դեբեդ գետի ձախ ափին` Լալվար լեռան ստորոտին` լեռնալանջի վրա: Ծովի մակարդակից` 780 մ բարձրության վրա: Այն կազմված է մի քանի թաղամասերից: Բուն թաղամասը նախկին Ներքին Ախթալա գյուղն է, իսկ նոր թաղամասը տեղադրված է Շամլուղ գետի բարձրադիր ափին:

Հեռավորությունը մարզկենտրոն Վանաձորից 62 կմ է, իսկ մայրաքաղաք Երևանից՝ 180 կմ:

Ախթալա քաղաքային համայնքի տարածքը տեղակայված է Դեբեդ գետի վերին հոսանքի ավազանում՝ Վիրահայոց լեռնաշղթայի լանջերին: Լանջերը խիստ թեք են, անտառապատ: Դեբեդ գետի կիրճը խորն է՝ ծովի մակարդակից բարձր 250-350մ: Կիրճի երկու ափերին տարածված են լավային սարահարթեր, որոնք ունեն սեղանաձև մակերևույթ (բացարձակ բարձրությունները՝ 700-ից 1100մ): Այդ սարահարթերը կամ կառուցապատված են, կամ զբաղված են մշակովի հողերով: Ախթալա քաղաքի կառուցապատված տարածքը մասնատված է մի քանի թաղամասերի, որոնք տեղակայված են Ախթալա գետի աջ և ձախ ափերի համեմատաբար փոքր թեքություններ ունեցող լանջերին՝ սարահարթերի վրա, ինչպես նաև Դեբեդ գետի հովտի հարթ տեղամասերում:

Կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքներն ունեն բարենպաստ ինժեներաերկրաբանական պայմաններ: Տարածքը հիմնականում ներկայացված է ժայռային ապարներով (քվարցային պորֆիրիտներ, դիորիտներ, անդեզիտներ)՝ ծածկված 4-6 մ հզորության մակերեսային նստվածքներով:

Գեոդինամիկ պրոցեսներից Ախթալա գետի ողողահունի աջ և ձախ լանջերին տարածված են փոքր սահքեր: Էրոզիոն պրոցեսները տարածված են թեք լանջերին: Ախթալա-Շամլուղ ճանապարհի որոշ հատվածներում լանջերը փլուզման վտանգի տակ են: Տարածքին սպառնում են նաև Դեբեդի վտակների (Ախթալա գետը և դրա վտակները) հեղեղումները:

Քաղաքի տարածքի սեյսմատեկտոնական պայմանները բարենպաստ են: Դրանց գնահատման ընթացքում խիստ կարևորվում են ակտիվ խզվածքների ազդեցության գոտիների բացահայտումը և գրունտային պայմանների հաշվառումով սեյսմիկ վտանգի ելակետային արժեքների որոշումը:

Քաղաքի տարածքում ակտիվ տեկտոնական ճեղքերը բացակայում են: Գրունտների առավելագույն արագացումները ամբողջ տարածքում չեն գերազանցում 0.20 գ (8 բալ):

## Կլիման

Ախթալա քաղաքը գտնվում է «տաք» կլիմայական գոտում, բացարձակ բարձրությունը ծովի մակերևույթից 900 մ է: Համայնքի կլիման մերձարևադարձային է՝ «արևոտ չափավոր խոնավ եղանակային տիպով:

ՁÙ»éÁ ã³÷³íáñ Ù»ÕÙ ¿, ձÛ³Ý Ï³ÝáÝ³íáñ Í³ÍÏáõÛÃ ãÇ Ó¨³íáñíáõÙ: Գերակշռում են տաքացումները (միջին օրական ջերմաստիճանը բարձր է $0^{o}$-ից): Միջին տվյալներով ձմեռը սկսվում է դեկտեմբերի երկրորդ կեսից և ավարտվում է մարտի առաջին կեսին: Հունվարի միջին ջերմաստիճանը տատանվում է $-1,3^{o}$, բացարձակ նվազագույնը $-22^{o}C$ է: Իսպառ բացակայում են «զգալի սառնամանիքներով» և «սառնամանիքներով» եղանակները:

¶³ñáõÝÁ ã³÷³íáñ ËáÝ³í ¿, »ñÏ³ñ³ï: Տեղումների քանակը տատանվում է ամսական 80-140 մմ-ի սահմաններում: Ամսական միջին ջերմաստիճանը կազմում է 12-16.$9^{o}C$: Գարնանային ցրտահարություններն ավարտվում են ապրիլի երկրորդ, երրորդ տասնօրյակներում (ամենաուշը՝ մայիսի 21-ին): Գարնան առաջին

կեսին գերակշռում են անձրևային և ամպամած, իսկ երկրորդ կեսին` արևոտ, չափավոր խոնավ եղանակները:

²Ù³éÁ  ï³ù  ¿, »ñÏ³ñ³ï¨, Ñ³Ù»Ù³ï³µ³ñ  ËáÝ³í: Յունիս-օգոստոս ամիսներին միջին ջերմաստիճանը տատանվում է 20,1°C-ից 23,3°C-ի սահմաններում,, բացարձակ առավելագույնը` 37°C: Ամսական տեղումների քանակը 37-79 մմ է: Ամռան առաջին կեսին գերակշռում են «արևոտ, չափավոր խոնավ» եղանակային տիպերը, երբ միջին օրական ջերմաստիճանը չի բարձրանում 15°C-ից: Հ³×³խակի »Ý ³ÙåñáåÝ»ñÁ,  áñÇ Ñ»ï¨³Ýùáí Ù»Í³ÝáõÙ ¿ ÙÃÝáÉáñïÇ իոնի½³óÇ³Ý` ÙÇ գործընթաց, áñÁ ¹ñ³Ï³Ý ³½¹»óáõÃÛáõÝ áõÝÇ ßÝã³é³Ï³Ý ûñ·³ÝÝ»ñÇ ³Ëï³Ñ³ñÙ³Ùµ ï³é³åáÕ ÑÇí³Ý¹Ý»ñÇ íñ³: Ամռան երկրորդ կեսը շոգ է` հագեցած խոնավությամբ (62-64%): Ամռանը եղանակները բնութագրվում են փոփոխական ամպամածությամբ, կայուն եղանակային ռեժիմով: «Արևոտ, չափավոր խոնավ» և «շոգ, չափավոր խոնավ» եղանակային տիպերը դիտվում են 8-13 օր, «շատ շոգ և խոնավ» եղանակները դիտվում են 10-12 օր, իսկ ամպամած և անձրևային եղանակները` միայն 1-2 օր:

Աշունն Ախթալայում բնորոշվում է անձրևոտ և ամպամած եղանակով: Աշունը կարճ է, սառը: Ամպամած և անձրևային եղանակները դիտվում են 7-8 օր ամսվա ընթացքում:

### Ջրային ռեսուրսները




Ախթալայի քաղաքային համայնքի տարածքը տեղակայված է Դեբեդի և նրա վտակներ Ախթալայի (Ուչքիլիսե), Նազիկի, Նահատակի գետահովիտների թեք լանջերին և լանջերի վրա առաջացած սարահարթերի վրա:

Գետերը սնվում են հալոցքային, անձրևային և ստորգետնյա ջրերով:

Գարնանային գետավարարումը սկսվում է մարտ ամսին, տևում է բավականին երկար և ընթանում մեծ տատանումներով (վերելքներով և անկումներով): Վերջին մեծ ջրհեղեղը տեղի է ունեցել 1969 թ.:

Դեբեդ գետը Քուռի ավազանի ամենախոշոր գետն է, նրա երկարությունը 178 կմ է, ջրհավաք ավազանի մակերեսը` 4080 կմ$^2$, միջին տարեկան ծախսն ըստ Մեծ Այրում դիտակետի, որն Ախթալա ավանից 5 կմ հեռավորության վրա է, 35.8 մ$^3$/վրկ է: Գետի ջուրն օգտագործվում է ոռոգման նպատակով:

Քաղաքի բնակելի ֆոնդը կազմում է 62340 մ$^2$, որից 1-2 հարկանի առանձնատներինը` 11 560 մ$^2$, որտեղ բնակվում է 407 մարդ: Բազմաբնակարան շենքերի բնակելի ֆոնդը կազմում է 50 780 մ$^2$, որտեղ

բնակվում է 3035 մարդ: Բնակչության ապահովվածությունը բնակելի ընդհանուր մակերեսով կազմում է 20.5 $մ^2$:

Աղյուսակ 2. Համայնքի առկաբնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

| Հ/հ | Ցուցանիշները | Ընդամենը համայնք |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1. | Առկաբնակչության թիվը, այդ թվում` | 2791 |
| | Տղամարդիկ | 1256 |
| | Կանայք | 1535 |
| | 0-6 տարեկան , այդ թվում` | 123 |
| | 0-3 տարեկան | 73 |
| | 3-6 տարեկան | 124 |
| | 7-17 տարեկան | 269 |
| | 18-63 տարեկան | 1514 |
| | 63-ից բարձր տարեկան | 239 |
| 2. | Կենսաթոշակառուներ` | 239 |
| 3. | Տարիքային և աշխատանքային | 124 |
| 4. | Միակողմանի ծնողազուրկ երեխաներ | 11 |
| 5. | Արցախյան պատերազմի մասնակիցներ | 7 |
| 6. | Հաշմանդամներ, այդ թվում` | 11 |
| 7. | Գործազուրկներ, այդ թվում` | 44 |
| 8. | Գրանցված | 44 |
| 9. | Առկա տնային տնտեսությունների թիվը | 995 |
| 10 | Ընտանեկան նպաստների պետական | 61 |
| 17 | Նպաստառու ընտանիքների թիվը | 21 |

| | | |
|---|---|---|
| 11 | Հայրենական մեծ և արցախյան պատերազմներում զոհվածների | - |
| 12 | Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում` | 12 |
| 13 | Անօթևան ընտանիքներ | - |
| 14 | Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը | 12 |
| 15 | Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը | 32 |
| 16 | Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը | 64 |

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ

2016թ. հոկտեմբերին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում ընտրվել են համայնքի ավագանին՝ բաղկացած 9 անդամից, և համայնքի ղեկավարը, որը ձևավորել է համայնքի աշխատակազմը՝ բաղկացած 10 աշխատակցից: Համայնքի ավագանին 2016 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 52-Ա որոշմամբ հաստատել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

- համայնքի ղեկավար - 1 միավոր, 235,0 հազ. դրամ,
- համայնքի ղեկավարի օգնական - 1 միավոր, 120,0 հազ. դրամ,
- աշխատակազմի քարտուղար - 1 միավոր, 191,0 հազ. դրամ,
- առաջատար մասնագետ–հաշվապահ 1 միավոր, 186,0 հազ. դրամ,
- առաջատար մասնագետ- 1 միավոր, 186,0 հազ. դրամ,
- առաջին կարգի մասնագետ- 1 միավոր, 85,1 հազ. դրամ,
- երկրորդ կարգի մասնագետ- 1 միավոր, 84,1 հազ. դրամ,
- Հսկիչ 0.5 միավոր, 78.0 հազ. դրամ,
- Օպերատոր 1 միավոր, 78.0 հազ. դրամ,
- Հարկահավաք 1 միավոր, 78.0 հազ. դրամ

**Ընդամենը՝ 9.5 միավոր, 1321.2 հազ. դրամ:**

Համայնքի ղեկավարը 2016 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 50-Ա որոշմամբ հաստատել է 3 համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

1. «Ախթալա համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ 16 աշխատակից՝
   - տնօրեն - 1 միավոր, 100,0 հազ. դրամ,
   - հաշվապահ - 1 միավոր, 80.0 հազ. դրամ,
   - դաստիարակ - 4.0 միավոր, 92.6 հազ. դրամ,
   - երաժիշտ- 0,50 միավոր, 92.6 հազ. դրամ,
   - խոհարար - 2.31 միավոր, 72.8 հազ. դրամ,
   - տնտեսվար 1.0 միավոր, 78.0 հազ. դրամ

2. «Ախթալա քաղաքային համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ, 6 աշխատակից՝
   - տնօրեն - 1 միավոր, 100,0 հազ. դրամ,
   - հաշվապահ - 0.50 միավոր, 78,0 հազ. դրամ,
   - վարորդ - 1,0 միավոր, 100,0 հազ. դրամ,

- բանվոր - 1 միավոր, 100,0 հազ. դրամ,
- բանվոր - 1 միավոր, 72.8,0 հազ. դրամ
- հավքարար- 1 միավոր, 72.8 հազ. դրամ:

Ընդամենը՝ 5.5 միավոր, 533.6 հազ. դրամ:

3. «Ախթալայի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ,, 8 աշխատակից՝

- տնօրեն - 1 միավոր, 72.8,0 հազ. դրամ,
- հաշվապահ - 0,5 միավոր, 78.0 հազ. դրամ,
- դաշնամուրի դասատու - 5 միավոր, 72.8 հազ. դրամ,
- հավաքարար - 1 միավոր, 72.8 հազ. դրամ:

Ընդամենը՝ 7.5 միավոր, 296.4 հազ. դրամ:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականությունն են հանդիսանում նրա կազմի մեջ մտնող նախկին համայնքների սեփականություն համարվող գույքը, որի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ:

Համայնքի սոցիալ-տնտեսական յուրաքանչյուր ենթակառուցվածքի վիճակի գնահատումը կատարվել է՝ օգտագործելով Ներդիր 1-ում բերված գնահատման չափանիշները (գնահատականները):

Ներդիր 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքի վիճակի գնահատականներ

ա) գերազանց, եթե ենթակառուցվածքը վերջերս է կառուցվել կամ վերանորոգվել, գործում է անխափան.
բ) լավ, եթե ենթակառուցվածքն իր շահագործմանը խոչընդոտող լուրջ թերություններ չունի.
գ) բավարար, եթե ենթակառուցվածքը դեռևս գործում է, բայց արդեն կապիտալ նորոգման կարիք ունի.
դ) վատ, եթե ենթակառուցվածքը գործում է ամենացածր արտադրողականությամբ կամ բոլորովին չի գործում.

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի վարչական տարածքում գործող պետական կազմակերպություններն են՝ Ախթալայի Անդրանիկի Մարդարյանի անվան թիվ 1 և Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ները, «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ: Այդ կազմակերպությունների հետ ՏԻՄ-ը արդյունավետորեն համագործակցում են, արվել է հնարավորը կրթության և առողջապահության ոլորտներում ծառայությունների արդիականացման և արդյունավետության բարձրացման նպատակով:

Հասարակական կազմակերպություններից համայնքում գործում են ,,Համայնքային համախմբման և աջակցության ՀԿ,, գրասենյակը, «Հայասատանի երիտասարդ կանանց ասոցիացիա« ՀԿ-ն:

Քաղաքական կուսակցություններից համայնքի վարչական տարածքում գործում են ՀՀԿ-ը և ՀԱԿ գրասենյակները:

**Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն**

Համայնքը ունի գլխավոր հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթեր (գոտիավորման նախագիծ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն և այլն): Ախթալա համայնքում կանոնավոր կերպով իրականացվում է աղբահանություն: Աղբամանները և աղբահավաք մեքենա սահմանված կերպով ենթարկվում են սանիտարահիգիենիկ մշակման: Ախթալա համայնքի մոտավորապես 80%-ն ապահովված է փողոցային լուսավորությամբ:

Համայնքի գերեզմանատները ցանկապատերի վերանորոգման կամ մասնակի նորոգման կարիք ունեն:
Աղբահանությունն իրականացվում է Ախթալա քաղաքային համայնքի բարեկարգում ՀՈԱԿ-ի կողմից, շաբաթական 3 անգամ:

## ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում են համապատասխանաբար 12 առևտրի կետ, որոնք հիմնականում զբաղվում են սննդի որոշ տեսակների,ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով: Դրանք բոլորն էլ հաշվառված են պետական հարկային մարմնում, ինչպես նաև եռամսյա կտրվածքով վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջե՝ գործունեության թույլտվության համար:

## ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքում առկա են հանգստի կազմակերպման ինչպես նաև սպորտային միջոցառումների անցկացման վայրեր: Ախթալա համայնքը բաժանված է երեք թաղամասերի, որոնցում գործում են երկու խաղահրապարակներ, որոնք արժանացել են նախագահի մրցանակին «Լավագույն մարզական բակ» անվանակարգում զբաղեցնելով երկրորդ պատվավոր տեղը: Համայնքում առկա է երկու արհեստական խոտածածկով մարզադաշտ, որոնք օգտագործվում են սպորտլանդիաների և մարզչական աշխատանքների ժամանակ: Երեկոյան այնտեղ կազմակերպվում են նաև այլ երիտասարդական միջոցառումներ, սպորտլանդիաներ, մրցաշարատեր: Համայնքը ունի սպորտային հարուստ անցյալ և այդ ավանդույթները շարունակող երիտասարդություն:
Համայնքի պատմամշակութային արժեքները ըստ աղյուսակի՝

| Հերթական համարը | Հուշարձանը | Ժամանակահատվածը | Գտնվելու վայրը | Նշանակությունը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Ամրոց | 13 դ. | Ախթալա կայարանի հյուսիսային մասում, Դեբեդ և Ախթալա ձորերի միացման անկյունում | Հ | ավերված, ժայռոտ բլրի գագաթին |
| 2 | Գյուղատեղի | | քաղաքից հյուսիս-արևելք մայրուղուց աջ | Հ | - |
| 2.1 | Գերեզմանոց | 9-14 դդ. | մատուռի շուրջը | Հ | ավերված |
| 2.1.1. | Խաչքար | 9-10 դդ. | | Հ | - |
| 2.1.2. | Խաչքար | 13 դ. | մատուռից 30 մ հյուսիս. | Հ | բլրի վրա |
| 2.1.3. | Խաչքար | 13 դ. | մատուռի հարավային ճակատի մոտ | Հ | |
| 2.1.4. | Խաչքար | 13 դ. | | Հ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **2.2.** | Մատուռ | 12-13 դդ. | | Հ | կիսավեր |
| **2.2.1.** | Խաչքար | 13 դ. | մատուռում | Հ | կոտրված |
| **2.2.2.** | Խաչքար | 13 դ. | մատուռում | Հ | հատված |
| **3.** | Դամբարանադաշտ | Ք.ա. 2-1 հազ. | քաղաքի մեջ | Հ | պեղել է Ժակ դը Մորգանը |
| **4.** | Եկեղեցի | 10-12 դդ. | կայարանում | Հ | |
| **5** | Եկեղեցի | 19 դ. | քաղաքի մեջ | Տ | |
| **6** | Խաչքար | 13 դ. | Ախթալա մտնող ճանապարհից ձախ, ճաշարանի մոտ | | |
| **7** | Խաչքար «Ամենափրկիչ» | 12-13 դդ. | պանսիոնատ տանող ճանապարհի աջ եզրին | Հ | |
| **8** | Մատուռ | | Ախթալա կայարանում | Հ | |
| **9** | Քարայր-կացարանների համալիր | | Ախթալա կայարանում | Հ | |
| | | | **Նախկին Ախթալա գյուղը** | | |
| **1** | Ամրոց Ախթալա (պղնձահանք, միսխանա) | 10-13 դդ. | գյուղի մեջ, հրվանդանի վրա | Հ | |
| **1.1.** | Վանական համալիր Ախթալա (Պղնձահանքի վանք, Մարիամ Աննայի վանք, Մեյրիման) | 13 դ. | | Հ | |
| **1.1.1.** | Գերեզմանոց | 13-14 դդ. | | Հ | Զաքարյանների տոհմական գերեզմանոցն է |
| **1.1.2.** | Եկեղեցի | 13 դ. | կից է Սբ. Աստվածածին եկեղեցուն հարավ-արևմուտք-ից | Հ | |
| **1.1.3.** | Եկեղեցի | 13 դ. | Սբ. Աստվածածին եկեղեցուց հյուսիս-արևմուտք, պարսպապատի մոտ | Հ | |
| **1.1.4.** | Եկեղեցի Սբ.Աստվածածին | 13 դ. առաջին քառորդ | համալիրի կենտրոնական մասում | Հ | կառուցել է Իվանե Զաքարյանը, ունի որմնանկարներ |
| **1.1.4.1.** | Տապանաքար Մոսէս քահանայի | 10 դ. | եկեղեցու հյուսիսարևելյան ավանդատան մեջ | Հ | |
| **1.1.5.** | Մատուռ | 13 դ. | կից է Սբ. Աստվածածին եկեղեցուն հյուսիսից | Հ | |
| **1.1.6.** | Միաբանության շենքը | | Սբ. Աստվածածին եկեղեցու հյուսիսարևելյան կողմում, արևելյան պարսպապատին կից | | տանիքը փլված |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **1.1.7.** | Նախազավիթ սրահ | 13-14 դդ. | կից է Սբ. Աստվածածին եկեղեցուն արևմուտքից | Հ | |
| **2** | Ամրոց-դիտակետ | 10-13 դդ. | «Թոխմախ կալա» ամրոցից 3 կմ արևելք | | |
| **3** | Ամրոց «Թոխմախ կալա» | Ք.ա. 2-1դդ. հազ. 10-13 դդ. | գյուղից հարավ-արևմուտք, համանուն լեռան գագաթին, անտառում | Հ | |
| **4** | Գյուղատեղի «Բարիտ» | 9-16 դդ. | գյուղի հյուսիս-արևելյան կողմում | Հ | |
| **4.1.** | Գերեզմանոց | 9-16 դդ. | | Հ | |
| **4.1.1.** | Խաչքար Հակոբ երեցի | 1245 թ. | եկեղեցու հարավային պատի տակ | Հ | |
| **4.2.** | Եկեղեցի | 13 դ. | | Հ | |
| **4.2.1.** | Խաչքար | 13 դ. | Եկեղեցում | | |
| **4.3.** | Խաչքար Մարիամ Կյուրիկյանի | 1188 թ. | գյուղատեղիից արևմուտք, խճուղու աջ կողմում, ձորալանջին | Հ | պատվանդանի վրա |
| **5** | Դամբարանադաշտ | Ք.ա. 8-7 դդ. | Ախթալայի վանքից արևելք՝ «Սբ. Գևորգ» բլրի գագաթին և լանջերին | Հ | |
| **6** | Եկեղեցական համալիր | 13 դ. | Ախթալա ամրոցից 1 կմ արևմուտք | Հ | |
| **6.1.** | Եկեղեցի | 13 դ. | զույգ եկեղեցիներից հյուսիսային կողմինը | Հ | թաղածածկ |
| **6.2.** | Եկեղեցի | 13 դ. | կից է նախորդին հարավից | Հ | թաղածածկ, արևելյան կեսում ունի կամարակապ մուտքով գետնահարկ |
| **7** | Եկեղեցի Սբ. Բարսեղ | 13 դ. | գյուղի արևելյան կողմում | Հ | բլրի գագաթին |
| **8** | Եկեղեցի Սբ.Գևորգ | 1242-1250 թթ. | գյուղից 200 մ արևելյան, բարձր բլրի վրա | Հ | կառուցել է վանք առաջնորդ Պետրեն |
| **8.1.** | Գերեզմանոց | 13-20 դդ. | եկեղեցու մոտ | Հ | |
| **8.2.** | Կառույցներ՝ օժանդակ | 13 դ. | | Հ | |
| **9** | Խաչքար | 9-10 դդ. | | Հ | Ռ. Շալաղոյանի տնամերձում |
| **10** | Խաչքար | 12-13 դդ. | | Հ | Ժ. Մխիթարյանի տնամերձում |
| **11** | Խաչքար | 13 դ. | | Հ | Ռ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Շալաղոյանի տնամերձում |
| **12** | Մատուռ | 13 դ. | գյուղի կենտրոնական մասում | Հ | Մ. Բուռնաձեի բակում |
| **12.1.** | Խաչքար | 13-14 դդ. | մատուռում | | |
| **13** | Մատուռ Իվանեի և Դեմետրեի | | Ախթալա ամրոցից մոտ 100 մ արևմուտք | Հ | |
| **13.1.** | Խաչքար | 12-13 դդ. | | Հ | |
| **14** | Վանական համալիր Սբ. Երրորդություն | 13 դ. | գյուղի կենտրոնական մասում Ախթալայի վանքից 0.5 կմ հյուսիս-արևելք | Հ | |
| **14.1.** | Եկեղեցի | 13 դ. | | Հ | |
| **14.2.** | Եկեղեցի | 13 դ. | կից է նախորդին | Հ | |
| **14.3.** | Մատուռ | 13 դ. | | Հ | |
| **14.4.** | Սրահ | 13 դ. | | Հ | |

Ախթալայի հուշարձանախումբը Հայաստանի միջնադարյան մշակույթում առանձնահատուկ տեղ ունի: Այն հայկական մշակույթի մի յուրօրինակ բաղադրիչի՝ հայ քաղկեդոնական ճարտարապետության ու կերպարվեստի արժեքավոր նմուշներից է: Ամենահայտնի ու սիրված տեսարժան վայրերից են Ախթալայի միջնադարյան ամրոցն ու Սբ. Աստվածածին վանքը: Այս տարածաշրջանում մարդը բնակություն է հաստատել շատ վաղ ժամանակներից: Հայտնաբերվել են Ք.ա. III-I հազարամյակի հուշարձաններ: Ախթալայի մերձակա տարածքներից հատկապես հայտնի են ֆրանսիացի հնագետ Ժակ դը Մորգանի հայտնաբերած Ք.ա. VIII-VI դդ. թվագրվող քարարկղային թաղումներով դամբարանները, կավից, բրոնզից ու երկաթից պատրաստված մշակութային արժեքավոր առարկաները: Տարածված կարծիքի համաձայն՝ ամրոցի հիմնադրումը կապվում է Բագրատունի իշխանատոհմի կողմից Հայաստանի անկախության վերականգնման հետ: Այս շրջանում կառուցվում և վերակառուցվում են մի շարք ամրոցներ, բերդեր, վանքեր ու եկեղեցիներ: Շինարարական բուռն վերելք է դիտվում նաև հայոց Բագրատունիներին պատկանող Տաշիրքում: Ենթադրվում է, որ Ախթալայի ամրոցը X դարում հիմնել են Բագրատունի-Կյուրիկյանները: Ախթալայի ամրոցը Հայաստանի տարածքում համեմատաբար լավ պահպանվածներից է, որին բնորոշ է հայկական ճարտարապետության առանցքային տարրերից մեկը՝ կառույցի և բնական միջավայրի ներդաշնակության սկզբունքի կիրառումը: Սուրբ Աստվածածնի պատերը նկարազարդված են հոյակապ, հրաշալի պահպանված որմնանկարներով, և միայն Տիրամոր դեմքն է վնասված Լենկ Թեմուրի հորդաների արշավանքների ժամանակ: Ամրոցի մոտակայքում գտնվող լեռը կրում է հենց նրա անունը: Որմնանկարները կատարվել են XIII դարում, երբ եկեղեցին վերափոխվեց քաղկեդոնականի: Որմնանկարներն իրենց գունային լուծումներով մոտենում են բյուզանդականին, սակայն թեմաների ընտրությունը զուտ հայկական է: Պատմում են, որ որմնանկարների վառ գույները շեղում էին այցելուներին պատարագից, և քահանան զայրացած հրամայել է կրով

պատել դրանք: Ախթալա վանական համալիրի գլխավոր կառույցը Սբ. Աստվածածին եկեղեցին է: Այն որոշ հետազոտողների կարծիքով կառուցել է Իվանե Զաքարյանը: Ոմանք էլ գտնում են, որ այն կառուցված է եղել մինչև այդ, իսկ Իվանեն պարզապես հիմնովին վերակառուցել է եկեղեցին: Եկեղեցու շինարարության թվագրումը պարզելուն օգնում է Իվանե Զաքարյանի մահվան թվականը: Հստակ է, որ եկեղեցին կառուցված է եղել մինչև նրա մահը՝ 1227 թվականը: Կիրակոս Գանձակեցու հիշատակությամբ Իվանեն մահանալուց հետո թաղվում է Պղնձահանքում իր շինած եկեղեցու դիմաց: Իսկ հիմնվելով հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի՝ Պղնձահանքին վերաբերող մի վկայության վրա՝ ենթադրվում է, որ 1216 թվականին Աստվածածին եկեղեցին արդեն կառուցված է եղել: Այդ պնդման համար նպաստավոր է նաև եկեղեցու որմնանկարները հետազոտողների այն եզրակացությունը, ըստ որի դրանք հիմնականում արվել են 1205-1216 թվականներին: Ախթալայի վանական հուշարձանախումբը ոչ միայն հայկականի, վրացականի ու բյուզանդականի ներդաշնակ միահյուսումն է, այլև միաժամանակ ցույց էր տալիս պատմական և մշակութային իրավիճակը Հայաստանում: Ախթալայում և նրա շրջակայքում կան հիմնականում XIII դարում կառուցված այլ պատմաճարտարապետական հուշարձաններ: Դրանցից հիշատակելի են հատկապես Սբ. Երրորդություն վանքը, Զույգ եկեղեցիները, Սբ. Գևորգ եկեղեցին, մատուռներ, խաչքարեր և ամրոցատիպ շինությունների մնացորդներ: Ախթալայի վանական համալիրն իր ճարտարապետությամբ, գեղատեսիլ բնապատկերներով և առեղծվածային լեգենդներով ոգեշնչել է հայ կինեմատոգրաֆիայի «Պազոլինիին»՝ Սերգեյ Փարաջանովին, ով հենց այստեղ է նկարահանել «Նռան գույնը» ֆիլմի որոշ տեսարաններ: Այստեղ է որոշ ժամանակ պահպանվել Աստվածընկալ Սուրբ Խաչը, որով, ըստ ավանդության, Հովհաննես Մկրտիչը մկրտել է Հիսուս Քրիստոսին: Հույներն վանքն անվանում են «Մեյրամանի», հույն հանքափորներն վանքի պատերին արձանագրություններ են թողել: Սեպտեմբերի 20-ից 21-ը հայերը, հույներն ու վրացիները ուխտագնացության են գալիս այստեղ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում ընդգրկված մի քանի հուշարձանների հետ միասին Ախթալայի վանական համալիրը 2009 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ հայտարարվել է որպես «Հյուսիսային դարպաս» զբոսաշրջային կենտրոն:

## ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքում վերջին տարիների ընթացքում նկատելի է որոշակի դրական տեղաշարժ ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում: Ներկայումս նոր ձևավորված ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ-երի կողմից կազմակերպված հանրային հանդիպումներին ու միջոցառումներին: 2015թ.-ին Եվրոպայի խորհրդի կողմից «Աջակցություն տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի շրջանակներում

համայնքն իրականացրեց պիլոտային ծրագիր «Քաղաքացիների մասնակցության նախաձեռնության խթանումը» անվամբ, որի հիմնական նպատակը բնակչության իրազեկվածության, ինչպես նաև մասնակցայնության խթանումն էր, որի արդյունքում վեր հանավեցին բանկչությանը հուզող մի շարք խնդիրներ, և այդ խնդիրների լուծման համար անհրաժեշտ գործողությունների պլան: Տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը և աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ: Հիմնականում բոլոր միջոցառումները, տեղադրվում են նաև առցանց տարբերակով՝ համայնքի http://www.cmis.akhtala.am/ ինտերնետային կայքի միջոցով, որը նպաստում է ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ բնակչության վստահության ամրապնդմանը:

Համայնքի ավագանու կողմից ընդունվել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության,hամայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, hամայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, որոնք մեծապես կնպաստեն բնակիչների ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:

## ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտում կատարվել են լուրջ ուսումնասիրություններ, համայնքն 2014թ. դեկտեմբերից միացել է դիմակայուն քաղաքների շարքին, որի նպատակը համայնքը դեպի աղետները էլ ավելի դիամակայուն և պատրաստված դարձնելն է: Համայնքը ակտիվորեն աշխատանք է տանում բնական աղետներից համայնքի պաշտպանավածության բարձրացման ուղղությամբ: Յուրաքանչյուր տարվա բյուջեով նախատեսվում են ֆինանսներ մի շաք միջոցառումների իրականացման համար:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող 2 արտադրական ՍՊԸ-ների և ԱՁ-ների՝ առևտրի 12 մանր կետերի, գործունեությամբ, որոնց հետ ՏԻՄ- երը պաշտպանում են լավ ու բարյացակամ հարաբերություններ: Համայնքը գրավիչ է միջազգային դոնորների ինչպես նաև ֆինանսական ներդրումների համար:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՀՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի աշխարհագրական լավ դիրքը (մոտիկությունը մարզկենտրոն Վանաձորին, տարածաշրջանային կենտրոն Ալավերդուն, համայնքի տարածքով անցնող հանրապետական նշանակության ճանապարհը)
- Համայնքում զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմանների առկայությունը
- Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման, գեղատեսիլ բնությունը
- Համայնքին հարակից անտառամերձ գոտու առկայությունը
- Համայնքում գործող հանրակրթական դպրոցների բարվոք վիճակը, ինչպես նաև նախադպրոցական ուսումնական, արտադպրոցական ուսումնական հաստատությունների առկայությունը և հագեցվածությունը անհրաժեշտ ուսումնամեթոդական և դիդակտիկ պարագաներով:
- Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը, ինչպես նաև համայնքի պաշտոնական կայքէջի առկայությունը
- Համայնքի խմելու ջրի ներհամայնքային համակարգերի առկայությունը և բարվոք վիճակը:
- Համայնքում «Ախթալայի մանկական արվեստի դպրոց» և «Ախթալա քաղաքային համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ-ների գործելը
- Համայնքի տարածքում նշանավոր Ախթալայի Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցու և վանական համալիրի , պատմամշակութային հուշարձանների (եկեղեցիներ, մատուռներ, ամրոցներ, գյուղատեղիներ) առկայությունը:
- Քաղաքացիների և տնտեսվարողների իրավունքների պաշտպանության նկատմամբ համայնքի ղեկավարի և ավագանու շահագրգռվածությունը
- Համայնքի բյուջեի սեփական եկամուտների կայուն աճ
- Համայնքի բնակիչների օրինապահությունը
- «Խորովածի և արվեստի միջազգային փառատոն» ամենամյա միջոցառումների անցկացումը
- Համայնքի քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների պլանի առկայություն
- Համայնքի բոլոր ուսումնական հաստատությունների լավ վիճակը
- Ակտիվ բնակչության խավի և «Համայնքային ակտիվների խմբի» /ՀԱԽ/ առկայություն
- Մարզադաշտի և խաղահրապարակների առկայությունը
- Համայնքում տարբեր ազգությունների ներկայացուցիչների առկայությունը և համայնքային կյանքին ներգրավվածությունը
- Պատմամշակութային մի շարք արժեքների առկայությունը և զբոսաշրջության զարգացման մեծ պոտենցիալը
- Համայնքային զբոսաշրջության զարգացման գրասենյակի առկայությունը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Քաղաքացիների իրավական ակտերին անծանոթ լինելը և իրավական գիտակցության ցածր մակարդակը
- Համայնքի բարդ և աղետավտանգ ռելիեֆը
- Ջրահեռացման համակարգի վատ վիճակը  և մաքրման կայանի բացակայությունը
- Հողերի որակի բարելավմանն ուղղված անբավարար միջոցներ, ինչպես նաև թունավոր նյութերի մաքրման համար անհրաժեշտ միջոցների բացակայությունը
- Մարզադաշտի վատ վիճակը և գույքային նվազ հագեցվածությունն
- Զբաղվածության ցածր մակարդակը և միգրանտների դիանմիկայի աճը
- Մրգերում և հատապտուղներում ծանր մետաղների  առկայությունը
- Զբոսաշրջության ենթակառուցվածքների բացակայությունը կամ թույլ զարգացվածությունը
- Համայնքում աղբահանության ծառայության կազմակերպման փոքր մասշտաբը և ցածր մակարդակը, ժամանակակից աղբավայրի, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազայի և ֆինանսական հնարավորությունների բացակայությունը
- Մի շարք թաղամասեր գազամատակարարման ծածկույթի մեջ չընդգրկված լինելը, գազամատակարարման ցանցի արդիականացումը, սպասարկման որակի բարելավումը
- Համայնքում  աշխատատեղերի քիչ քանակությունը, գործազրկության բարձր մակարդակը
- Համայնքում սոցիալական խոցելի խմբերի առկայությունը
- Գերեզմանատան ցանկապատի վատ վիճակ, որոշակի հատվածներում ցանկապատի բացակայություն:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Էականորեն բարձրացնել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ի հաշիվ տեղեկատվական արդի համակարգերի ներդրման և արդյունավետ շահագործման
- Բարձրացնել ՏԻՄ-երի ինքնուրույնության մակարդակը՝ մշակելով և իրականացնելով նպատակամետ ու արդյունքահեն համայնքային քաղաքականություններ, ռազմավարություններ և ծրագրեր
- Էականորեն մեծացնել համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված հնարավորությունները՝ կապված համայնքի սեփականություն համարվող հողային, գույքային և ֆինանսական ռեսուրսների բազային ծավալների մեծացման և դրանց նպատակային օգտագործման հետ
- նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) զարգացմանը՝ օգտվելով համայնքում բնական պաշարների, պատմամշակութային և այլ արժեքների առկայությունից
- Նպաստել համայնքի ավագանու ինստիտուտի կայացմանը, որի շնորհիվ կուժեղանա համայնքի ներքին վերահսկողության համակարգը և, արդյունքում, կբարձրանա համայնքի ընդհանուր կառավարման արդյունավետությունը
- Համայնքում ստեղծել լուրջ նախադրյալներ և նպաստավոր պայմաններ ժողովրդագրական աճի, սոցիալ-տնտեսական և տեղական ժողովրդավարության զարգացման համար՝ հիմնելով նոր աշխատատեղեր, ավելացնելով ընտանիքների եկամուտները և բարձրացնելով բնակչության ընդհանուր կենսամակարդակը, հաղթահարելով աղքատությունը և կանխելով արտագաղթը
- Համայնքի վարչական տարածքում զարկ տալ գյուղատնտեսության և ՓՄՁ զարգացմանը
- Համայնքի ամբողջական գազաֆիկացումը նկատելիորեն կնպաստի համայնքի բնակչության կենցաղային կարիքների բավարարմանը,
- Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, համայնքում պատշաճ մակարդակով կազմակերպելու աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը, ինչպես նաև էականորեն կբարձրացնի զբոսաշրջության և այլ ոլորտային ծրագրերի արդյունավետությունն ու իրացվելիությունը
- Քաղաքացիների մանսկացության խթանմանն ուղղված միջոցառումների իրականցում, որի արդյունքում կստեղծվի իրավական «Ակտերի ծանոթ միջավայր և օրինապահ քաղաքացի հանրույթը»
- մարզադաշտի վերանորոգման հնարավորություն, քանզի այն էականորեն կխթանի առողջ ապրելակերպը և կնպաստի սպորտային ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը:
- Աղտոտված հողերի քարտեզագրում և հնարավորության դեպքում

համապատասխան միջոցառումների ձեռնարկում աղտոտվածության մակարդակի նվազեցմանն ուղղված, որի արդյունքում հնարավոր կլինի գյուղատնտեսական մի շարք համալիր միջոցառումների իրականացում

- Զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծում, ինչպես նաև համագործակցություն առաջատար տուր ընկերությունների հետ
- Այլ աղբյուրներից՝ պետական բյուջեից, միջազգային և դոնոր կազմակերպություններից , անհատ ներդրողներից ֆինանսական միջոցների ներգրավում
- Ափապաշտպան կառույցների հիմնանորոգում, սելաֆատարների կառուցում
- Բազմաբնակարան շենքերի տանիքների և մուտքերի հիմնանորոգում՝ պետական և համայնքային բյուջեի միջոցներով
- Համատիրությունների ստեղծում

## ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Բնակիչների հարկային պարտավորությունների կատարման ոչ բավարար վիճակը
- Անհրաժեշտ ռեսուրսների անբավարարությունը
- Միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհներին քարաթափումների և սողանքների վտանգը
- Աղբավայրի բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը
- Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցություն համայնքի և այլ ներդրողների վրա
- Բնական աղետների սպառնալիքներ
- Ֆինանսական միջոցների սուղ լինելը
- Հողերի դեգրադացիա
- Գնաճ / ինֆլյացիա /
- Համայնքի բյուջեի սեփական եկամուտների ցածր հավաքագրելիություն
- Արտադրության հնարավոր աղբյուրների ստեղծում
- Տարածաշրջանային բացասական քաղաքականություն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀ՛Ծ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Համայնքը դարձնել հարմարավետ բնակիչների համար, հրապուրիչ ներդրողների համար և գրավիչ զբոսաշրջիկների համար:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի **ռազմավարությունն** է՝

- ապահովել բնակավայրի աստիճանական ինտեգրումն և համաչափ զարգացումը,
- համայնքում էկոլոգիապես մաքուր արտադրության աստիճանական զարգացում,
- համայնքի տարածքի համեմատական առավելությունների բացահայտում և առնտրայնացում, այդ նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման .մարմինների, ՔՀՄՀ-ի կազմակերպությունների համագործակցության շրջանակների ընդլայնում և ջանքերի մեկտեղում
- համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով,
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- համայնքի բնակչության սոցիալ և տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, նախադպրոցական և դպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- համայնքի ՏԻՄ-երի, աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների աստիճանական հզորացում, տեղական ժողովրդավարության ամրապնդում, համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների հետևողական իրականացում,
- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների ներգրավվածության բարելավում՝ բնակիչների մասնակցության ձևերի ներդրման և զարգացման միջոցով,
- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում,
- համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների ներդրում և հետևողական կիրառում,
- նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:

**Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն են՝**

- ՏԻ-անը բնակիչների մասնակցության ակտիվացում՝ մասնակցության նոր մեթոդների և ձևերի ներդրման և աստիճանական զարգացման միջոցով,
- միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,
- համայնքի կենտրոնի հետ բոլոր բնակավայրերի հասարակական տրանսպորտի գործունեության ապահովում, ավտոկանգառների ստեղծում,
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների գազաֆիկացման, խմելու և տեխնիկական ջրի ջրամատակարարման արտաքին և ներբնակավայրային համակարգերի նորոգման և շահագործման, աղբահանության և սանիտարական ծառայությունների կազմակերպման և մատուցման ճանապարհով,
- համայնքում գործարար միջավայրի բարելավում՝ նոր աշխատատեղեր ստեղծող անհատներին և կազմակերպություններին խրախուսելու (օրինակ, տեղական հարկերի, տուրքերի և վճարների գծով արտոնություններ տրամադրելու) միջոցով:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

2017-2021թթ. ընթացքում համայնքի ՏԻՄ-երը նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Լոռու մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017- 2021թթ.-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- Համայնքի զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծում՝ նպաստելով համայնքում զբոսաշրջության զարգացմանը:
- Համայնքի Միքայել Արամյանցի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի շենքի հիմնանորոգում՝ բարելավելով դպրոցական հանրակրթության որակը:
- Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում, որը հնարավորություն կընձեռնի հասնելու ավելի առողջ և սոցիալապես ապահով հասարակության:
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, արտակարգ իրավիճակներում համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

2017-2021թթ. ընթացքում Հայաստանում ընթացող բարեփոխումների և (կամ)

միջհամայնքային համագործակցության շրջանակներում նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները՝

- Ալավերդի համայնքի հետ ընդհանուր աղբավայրի ձևավորում և շահագործում, որը կնպաստի համայնքի բարեկեցությանը և մաքուր շր, որը կնպաստի համայնքի բարեկեցությանը և մաքուր շրջապատի ապահովմանը:Նախատեսվող համագործակցությա կողմեր են հանդիսանում Ախթալա համայնքը և ալավերդու համայնքը:
- Հնարավոր այլ ծրագրեր ու միջոցառումներ:
- Հայ-Ֆրանսիական համգործակցության շրջանակներում իրագործել «Ֆրանսիական թաղամասի շինարարության» ծրագիրը, ինչպես նաև Ժակ Դը Մորգանի անվան հնագիտության թանգարանի ստեղծումը:
- Համայնքի հանքագործական պատմությանը նվիրված «Ախթալայի հանքագործության թանգարանի» ստեղծում
- Միքայել Արամյանցի դղյակն օրենքով սահմանված կարգով համայնքին հանձնելու գործընթքացն ավարտին հասցնելու և հետագայում ի շահ համայնքի օգտագործելու վերաբերյալ
- Համայնքում քիմիական լաբորատորիայի ստեղծում, որը թույլ կտա հսկողության տակ պահել ծանր մետաղների առկայության քանակը շրջակա միջավայրի վրա և կնպաստի բնապահպանական ռիսկերի գնահատմանը
- Բակերի բարեկարգում, ճանապարհների և մայթերի վերանորոգում, նստարանների տեղադրում և համայնքի թաղամասերի համաչափ լուսավորում
- Ակտիվ համագործակցություն միջազգային դոնոր և հասարակական կազմակերպությունների հետ
- Համայնքի տարածքում գտնվող , բայց համայնքի սեփականություն չհանդիսացող մշակույթի պալատն օրենքով սահմանված կարգով համայնքին հանձնելու գործընթացի վերահսկում

2017-21թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և ՀՀ Լոռու մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները: Մասնավորապես, նախատեսվում է շարունակել համայնքի սերտ համագործակցությունը «Հայաստանի մանուկների հիմնադրամ» բարեգործական կազմակերպության, «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության Ալավերդու ՏԶԾ-ի, Ալավերդու «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի, «Թումանյան Աշխարհ» զբոսաշրջային միջհամայնքային գրասենյակի հետ՝ նախադպրոցական և դպրոցական կրթության, առողջապահության, երեխաների սոցիալական պաշտպանության, մշակույթի և սպորտի, տեղական ժողովրդավարության և մասնակցության, զբոսաշրջության, մարդու իրավունքների, համայնքային զարգացման և այլ ոլորտներում: «Համայնքային համախմբման և աջակցության ՀԿ» գրասենյակի և «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ-ների հետ ակտիվ համագործակցություն:

## 2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ

### ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն սըտ տարիների կազմում է՝

Աղյուսակ 3. Համայնքի 2014-2016թ.թ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը
Հազար դրամ

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2014թ փաստ. | 2015թ. փաստ. | 2016թ. փաստ. | 2017թ. նախատ. | 2018թ. կանխ. | 2019թ. կանխ. | 2020թ. կանխ. | 2021թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔ ԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)* | **53178,5** | **51701,0** | **58506,8** | **57118.0** | **57218.0** | **57318.0** | **57318.0** | **57418.0** |
| I. | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆ ԵՐ (1+2+3)* | **53178,5** | **51701,1** | **58506,8** | **57118.0** | **57118.0** | **57118.0** | **57118.0** | **57118.0** |
| 1. | ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | **7283,6** | **7493,6** | **7493,6** | **7493.6** | **7493.6** | **7493.6** | **7493.6** | **7493.6** |
| 1.1 | Գույքային հարկեր անշարժ գույքից | **1539,6** | **1539,0** | **1539,6** | **1539.6** | **1539.6** | **1539.6** | **1539.6** | **1539.6** |
| | Գույքահարկ շենքեր և շինությունների համար | 1016,3 | 1016,3 | 1016,3 | 1016.3 | 1016.3 | 1016.3 | 1016.3 | 1016.3 |
| | Հողի հարկ | 523,3 | 523,3 | 523,3 | 523.3 | 523.3 | 523.3 | 523.3 | 523.3 |
| 1.2 | Գույքային հարկեր այլ գույքից | **4876,0** | **4876,0** | **4876,0** | **4876.0** | **4876.0** | **4876.0** | **4876.0** | **4876.0** |
| | Գույքահարկ փոխադրա միջոցների համար | 4876,0 | 4876,0 | 4876,0 | 4876.0 | 4876.0 | 4876.0 | 4876.0 | 4876.0 |
| 1.3 | Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ | **818,0** | **1028,0** | **1028,0** | 1028.0 | 1028.0 | 1028.0 | 1028.0 | 1028.0 |
| | Տեղական տուրքեր | 818,0 | | 1028,0 | 1028.0 | 1028.0 | 1028.0 | 1028.0 | 1028.0 |
| 1.4 | Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ | 50,0 | 50,0 | 50,0 | 50.0 | 50.0 | 50.0 | 50.0 | 50.0 |
| | Պետական տուրքեր | 50,0 | 50,0 | 50,0 | 50.0 | 50,0 | 50,0 | 50,0 | 50.0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.5 | Այլ հարկային եկամուտներ | | | | | | | | |
| | Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ | | | | | | | | |
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | | | | | | | | |
| 2. | Պաշտոնական դրամաշնորհներ | **38341,8** | **35293,5** | **41799,2** | **40869.5** | **40869.5** | **40869.5** | **40869.5** | **40869.5** |
| 2.1 | Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | | |
| 2.2 | Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | | |
| 2.3 | Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | | |
| ա) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 31130,8 | 35293,5 | 38587,0 | 40869.5 | 40869.5 | 40869.5 | 40869.5 | 40869.5 |
| բ ) | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | | | | | | | | |
| գ ) | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 1350,0 | | 1376,2 | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| դ) | ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | | |
| 2.4 | Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | 3150,0 | | **3212,0** | | | | | |
| ա) | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 3150,0 | | 3212,0 | | | | | |
| բ) | ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացված միջոցներ | | | | | | | | |
| 3. | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ* | **7553,1** | **8914,0** | **9214,0** | **8754.9** | **8854.9** | **8954.9** | **8954.9** | **9054.9** |
| 3.1 | Տոկոսներ | | | | | | | | |
| 3.2 | Շահաբաժիններ | | | | | | | | |
| 3.3 | Գույքի վարձակալությունից եկամուտներ | **4202,4** | **4174,0** | **5274,0** | **5274.0** | **5274.0** | **5274.0** | **5274.0** | **5274.0** |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 174,0 | 174,0 | 174,0 | 174.0 | 174.0 | 174.0 | 174.0 | 174.0 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | | | | | | | |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման | | | | | | | | |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 4028,4 | 4000,0 | 5100,0 | 5100.0 | 5100.0 | 5100.0 | 5100.0 | 5100.0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.4 | Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում | **900,0** | 1300,0 | 1300,0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 |
| | Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | | | | | | | |
| 3.5 | Վարչական | **2380,7** | 3370,0 | 2570,0 | 2510.0 | 2610.0 | 2710.0 | 2710.0 | 2810.0 |
| | Տեղական վճարներ | 2330,7 | 3320,0 | 2520,0 | 2460.9 | 2560.9 | 2660.9 | 2660.9 | 2760.9 |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների | 50,0 | 50,0 | 50,0 | 50.0 | 50.0 | 50.0 | 50.0 | 50.0 |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող | | | | | | | | |
| 3.6 | Մուտքեր տույժերից, | 50,0 | **50,0** | **50,0** | 50.0 | 50,0 | **50,0** | **50,0** | 50.0 |
| | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության | | | | | | | | |
| | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման | | | | | | | | |
| 3.7 | Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | | |
| 3.8 | Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | | |
| 3.9 | Այլ եկամուտներ* | **20,0** | **20,0** | **20,0** | **20.0** | **20,0** | **20,0** | **20,0** | **20.0** |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | | | | | | | |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից | | | | | | | | |
| | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված` համայնքի բյուջեի | 20,0 | 20,0 | 20,0 | 20.0 | 20,0 | 20,0 | 20,0 | 20.0 |
| II. | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4) | | | | | | | | |
| 1. | Հիմնական միջոցների | | | | | | | | |
| | Անշարժ գույքի իրացումից | | | | | | | | |
| | Շարժական գույքի իրացումից | | | | | | | | |
| | Այլ հիմնական միջոցների | | | | | | | | |
| 2. | Պաշարների իրացումից | | | | | | | | |
| 3. | Բարձրարժեք ակտիվների | | | | | | | | |
| 4. | Չարտադրված ակտիվների իրացումից | | | | | | | | |
| | Հողի իրացումից մուտքեր | | | | | | | | |
| | Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | | | | |
| III. | ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ) | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա. | ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2) | | | | | | | | |
| 1. | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | | | | |
| 1.1 | Արժեթղթեր | | | | | | | | |
| | - Թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | | |
| | - Հիմնական Գումարի մարում | | | | | | | | |
| 1.2 | Վարկեր | | | | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | | | | |
| | - Ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | | |
| 1.3 | Փոխատվություննե | | | | | | | | |
| | Բյուջետային փոխատվությունների ստացում | | | | | | | | |
| | - Ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | | |
| 2. | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | | | | |
| 2.1 | Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն | | | | | | | | |
| | - Համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր | | | | | | | | |
| | - Իրավաբանական Անձանց կանոնադրական Կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում` անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | - Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն | | | | | | | | | |
| 2.2 | Փոխատվություններ | | | | | | | | | |
| | - Նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր | | | | | | | | | |
| | - Փոխատվությունների տրամադրում | | | | | | | | | |
| 2.3 | Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը | | | | | | | | | |
| 2.4 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս | | | | | | | | | |
| 2.5 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս | | | | | | | | | |
| Բ. | ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | | | | | | | | | |
| 1. | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | | | | | |
| 1.1 | Արժեթղթեր | | | | | | | | | |
| | - Թողարկումից և տեղաբաշխումից | | | | | | | | | |
| | - Հիմնական գումարի մարում | | | | | | | | | |
| 1.2 | Վարկեր | | | | | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | | | | | |
| | - Ստացված վարկերի հիմնական գումարի | | | | | | | | | |
| 1.3 | Փոխատվություններ | | | | | | | | | |
| | - փոխատվությունների ստացում | | | | | | | | | |
| | - Ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | | | |

*)Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետայինը ընդհանուր եկամուտների մեջ

## 2.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-երի կողմից ընտրված ռազմավարությունից, առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից և ՀԱԽ-երի, ՀՈԱԿ-ների կողմից արված առաջարկություններից, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի կառավարման գծով ԽՄ- ի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը ՝ ներառելու համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում:

Առաջարկվող ծրագրերի առաջնահերթությունները որոշելու նպատակով, ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից սահմանվել են ծրագրերի գնահատման հետևյալ չափանիշները՝

- հանրության աջակցությունը,
- ուղղակի և անուղղակի շահառուների թիվ,
- հարատևություն (կենսունակություն),
- ազդեցություն սոցիալական խոցելի խմբերի վրա, աղքատության նվազեցում,
- հիմնական միջոցների (ենթակառուցվածքների) պահպանում:

Կիրառելով ծրագրերի առաջնահերթությունների որոշման մասնակցային կառավարման մեթոդը և օգտագործելով ծրագրերի գնահատման սահմանված չափանիշները՝ ՀԶՀԾ- ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն իր նիստում քննարկել և որոշել է վերևում առաջարկված համայնքային ոլորտային ծրագրերի առաջնահերթությունները աղյուսակ 4):

Աղյուսակ4. Համայնքային ոլորտային ծրագրերի առաջնահերթությունների որոշումը

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի մոտավոր արժեքը (հազ. դրամ) | Գնահատման չափանիշներ (0-10 | | | | | | Ծրագրի առաջնահերթու-թյունը (տեղը) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հանրության աջակցությ | Ուղղակիևա նուղղակիշ | Հարատևու թյուն (կենսունակ ություն) | Ազդեցությունևս ոցիալականխո ցելիխմբերիվր | Հիմնական միջոցների (ենթակառու ցվածքների) պահպանում | Ընդամենը (բալ) | |
| 1. | Համայնքի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում | 113254,0 | X | X | X | X | X | X | 1 |
| 2. | Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում | 12886,0 | X | X | X | X | X | X | 1 |
| 3. | Համայնքում նախադպրոցական կրթության ապահովում և ընդլայնում | 77425,0. | X | X | X | X | X | X | 1 |
| 4. | Համայնքում արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում | 33615,0. | X | X | X | X | X | X | 1 |
| 5. | Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում | 47160,0. | X | X | X | X | X | X | 1 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6. | Սոցիալապես անապահով ընտանիքներին ցուցաբերվող աջակցություն | 9000,0 | X | X | X | X | X | X | 1 |
| 7. | Նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 1050,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 8. | Մշակութային կազմակերպություններ | 6000,0 | X | X | X | X | X | X | 3 |
| 9. | Ֆրանսիական թաղամասի կառուցում | 1000 000 Եվրո | X | X | X | X | X | X | 2 |
| 10 | Ժակ դը Մորգանի անվան հնագիտական թանգարանի կառուցում | 289.800,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 11 | Հանքագործության թանգարանի ստեղծում | 15,273,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 12 | Միքայել Արամյանցի դղյակի վերականգնում | 1,018,200,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 13 | Համայնքի տարբեր թաղամասերում նստարանների տեղադրում | 1.000.0 | X | X | X | X | X | X | 2 |
| 14 | Համայնքում թվով հինգ տաղավարների տեղադրում | 5,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 15 | Կենտրոնական և երկրորդային փողոցների լուսավորության ցանցի փոխարինում ԼԵԴ համակարգերով | 6 521000 | X | X | X | X | X | X | 1 |
| 16 | Մշակույթի պալատի ձեռքբերում կամ նորի կառուցում | 20.000,0<br>40.000,0 | X | X | X | X | X | X | 1 |
| 17 | Մշակութային և արվեստի խմբակների ստեղծում | 6 000 ,0 | X | X | X | X | X | X | 2 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | Սվինեց թաղամասի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի բակում խաղահրապարակի կառուցում | 10.000,0 | X | X | X | X | X | X | 1 |
| 19 | Սարահարթ թաղամասի ֆուտբոլի մարզադաշտի վերանորոգում | 8.000,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 20 | Ախթալա համայնքի թիվ 2 միջն. դպրոցի հիմնանորոգում | 208.000,0 | X | X | X | X | X | X | 1 |
| 21 | Բազմաբնակարան շենքերի տանիքների փոխարինում ցինկապատ թիթեղներով | 70.000,0 | X | X | X | X | X | X | 1 |
| 22 | Եկեղեցու և ամրոցի հարակից տարածքի աղտոտված հողածածկույթի փոխարինում | 48.300,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 23 | Դպրոցներում բակերի աղտոտված հողածածկույթի քիմիական մշակում կամ փոխարինում | 24 150 000,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 24 | Նոր գերեզմանատեղի կառուցում | 15.000,0 | X | X | X | X | X | X | 1 |
| 25 | Եկեղեցու գմբեթի կառուցում, վերականգնում | 294.000,0 | X | X | X | X | X | X | 1 |
| 26 | Աղբի տարանջատման և տեսակավորման համար նախատեսված աղբամանների ձեռքբերում | 1800,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 27 | Համայնքում թվով երկու կանգառների կառուցում | 1.000,0 | X | X | X | X | X | X | 1 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 28 | Համայնքի կոյուղագծերի փոխում և մաքրման կայանի ստեղծում | 300.000,0 | X | X | X | X | X | X | 1 |
| 29 | Ռազմավարական/15-20 տարի կտրվածքով/ ծրագրերի մշակում և վերահսկում | 1.000,0 | X | X | X | X | X | X | 3 |
| 30 | Ջրսաշրջային երթուղիների նախագծում և տուրիստական կազմակերպությունների հետ համատեղ գործարկում | 250,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 31 | Ախթալա համայնքի ամրոցի վերականգնում Ոսկեգործության, արծաթագործության և արհեստագործության արհեստանոցների հիմնում | 8 000,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 32 | Ախթալայի եկեղեցական համալիրի ընդգրկումը ՅՈՒՆԵՍԿՈ ի ժառանգության ցանկում | 1000,0 | X | X | X | X | X | X | 1 |
| 33 | Քաղաքի ճանաչելիությունը բարձրացնելու նպատակով ստեղծել քաղաքի լոգոն և զբաղվել Ախթալայի բրենդինգով | 500,0 | X | X | X | X | X | X | 1 |
| 34 | Փոքր տուրիստական համայնքների միության ստեղծում | 20,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 35 | Ախթալայի ամրոցի տարածքում ամենամյա ազգային խաղերի փառատոններ անցկացում | 1000,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 36 | Սպորտային տարբեր ձևերի համար նախատեսված ենթակառուցվածքների ստեղծում/ ռաֆթինգ, ժայռամագլցում, քայլարշավային, | 10 000,0 | X | X | X | X | X | X | 2 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 37 | Դպրոցներում տեխնոլոգիական լաբորատորիաների ստեղծում, ռոբոտաշինության և այլ ավտոմատացված համակարգերի նախագծման խմբակների հիմնում | 2 000,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 38 | Կարի ֆաբրիկայի գործարկում | 200 000,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 39 | Ախթալա համայնքին նվիրված գրքերի, բուկլետների և այլ ինֆորմացիոն նյութերի հրապարակում | 3000,0 | X | X | X | X | X | X | |
| 40 | Ախթալան «Խորոված մայրաքաղաքի հռչակում» | 1500,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 41 | Անդրանիկ Մարգարյանի և Միքայել Արամյանցի կիսանդրիների տեղադրում նույնանուն դպրոցների բակում | 4 000,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 42 | Ֆրանսիական պուրակի ստեղծում | 1500,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 43 | Ախթալա համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի Բարիտ թաղամասի մասնաշենքի երկրորդ հարկի և տանիքի վերանորոգում | 15000,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 44 | Արդյունաբերող համայնքների միության ստեղծում | 20,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 45 | Անգլերեն և ֆրանսերեն լեզվի ուսուցում | 2 400,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 46 | Համայնքի տարածքում սելավատարերի և ջրատապատնեշների ամենամյա մաքրում և նորոգում | 500,0 | X | X | X | X | X | X | 2 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 47 | Ախթալա համայնքում համաժողովների անցկացում նվիրված ներդրումային գրավչության,քաղաքի պատմության և ֆրանսիական արմատների վերհանմանը | 8 000,0 | X | X | X | X | X | X | 1 |
| 48 | Ֆրանկոֆոնիայի օրեր Ախթալայում, մասնավորոպես ֆրանսիական պուրակում տարաբնույթ միջոցառումների կազմկերպում | 8 000,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 49 | «Ախթալայի հեռանկարներ» էսսեների և ֆոտոների մրցույթի անցկացում | 1000,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 50 | Ռազմահայրենասիրական թեմաներով միջոցառումներ | 4 200,0 | X | X | X | X | X | X | 2 |
| 51 | Եկեղեցու 800-ամյակի, Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի 50 ամյակին նվիրված միջոցառումներ | 10 000,0 | X | X | X | X | X | X | 2 |

Հիմք ընդունելով վերևում կատարված վերլուծությունը և ամփոփելով ՀԶՀԾ-ում ներառվող համայնքի առաջնահերթ և ֆինանսապես ապահովված ընդհանուր և ոլորտային ծրագրերը, դրանց ամփոփագիրը բերված է աղյուսակ 6-ում, որտեղ թվարկված են 2017- 2021թթ. ընթացքում իրականացման ենթակա բոլոր ոլորտային ծրագրերի անվանումները, քանակական ծավալները, արժեքները (ծախսերը), կատարման տարիները և ֆինանսավորման աղբյուրներն՝ ըստ ծրագրերի որոշված առաջնահերթությունների:

Ամփոփելով, աղյուսակ 6-ում երևում է, որ 2017-2021թթ. ընթացքում համայնքում ծրագրվում է թվով 59 կարևորագույն ծրագրեր:

Աղյուսակ 6. Համայնքի 2017-2021թթ. ֆինանսապես ապահովված ընդհանուր և ոլորտայինծրագրերի ամփոփագիր՝ ըստ ծրագրերի առաջնահերթությունների

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Չափի միավորը | Ծրագրի քանակական ծավ | Ծրագրի արժեքը, հազ. դրամ | Ծրագրի կատարումն ըստ տարիների | | | | | Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | Համայնքի բյուջե | Դոնոր կազմ.-եր | Պետ բյուջե | ՀՈԱԿ-ի բյուջե |
| 1. | Համայնքի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում | աշխատող | 10 | 113254,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | | | |
| 2. | Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում | աշխատող | 4 | 12886,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | | | |
| 3. | Համայնքում նախադպրոցական կրթության ապահովում և ընդլայնում | երեխա | 65 | 77425,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան Ախթալայի համայնքապետարան | | | Ախթալա համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ |
| 4. | Համայնքում արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում | երեխա | 60 | 33615,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | | | ,,Ախթալայի մանկական արվեստի դպրոց ՀՈԱԿ |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5. | Համայնքում աղբահանության և սանմաքրման ծառայությունների մատուցում | աշխատող | 6 | 46360,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | | | ,,Ախթալա քաղաքային համայնքի բարեկարգում,, ՀՈԱԿ |
| 6 | *Նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին / Տուրիզմի զարգացման հիմնադրամ/* | Դրամ | 5 | 1050,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | | | |
| 7 | Մշակութային կազմակերպություններ | դրամ | 5 | 6000,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | | | |
| 8. | Ֆրանսիական թաղամասի կառուցում | դրամ | 1 | 100 00 0,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | Ֆրանսիայի կառավարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն | | |
| 9 | Ժակ դը Մորգանի անվան հնագիտական թանգարանի կառուցում | դրամ | 1 | 289.800 ,0 | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Հանքագործության թանգարանի ստեղծում | դրամ | 1 | 15,273,0 | | | | | | | ԼՀԿ ԵՄ Արևելյան գործընկերության համագործակից կառույցներ | | |
| 11 | Միքայել Արամյանցի դղյակի վերականգնում | դրամ | 1 | 1,018,200,0 | | | | | | | Անհատ Ներդրողներ | | |
| 12 | Կենտրոնական և երկրորդային փողոցների լուսավորության ցանցի փոխարինում ԼԵԴ համակարգերով | դրամ | 1 | 6 521,0 | | | | | | | ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության գրասենյակ<br>Վայրի բնության պահպանության գրաենյակ | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | Մշակույթի պալատի ձեռքբերում կամ նորի կառուցում | դրամ | 1 | 20.000,0 – 40.000,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | | ՀՀ Կառավարություն | |
| 14 | Մշակութային և արվեստի խմբակների ստեղծում / խեցեգործություն,փայտափորագրություն, գոբելենագործություն/ | դրամ | 1 | 6 000,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | | ՀՀ Կառավարություն | |
| 15 | Սվինեց թաղամասի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի բակում խաղահրապարակի կառուցում | դրամ | 1 | 30.000,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | | ԱՄՆ ՄԶԳ | |
| 16 | Սարահարթ թաղամասի ֆուտբոլի մարզադաշտի վերանորոգում | դրամ | 1 | 8.000,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | | | |
| 17 | Ախթալա համայնքի թիվ 2 միջն. դպրոցի հիմնանորոգում | դրամ | 1 | 208.000,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | | ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամ | |
| 18 | Բազմաբնակարան շենքերի տանիքների փոխարինում ցինկապատ թիթեղներով | դրամ | 1 | 70.000,0 | | | | | | | | ՀՀ Պետ բյուջե | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | Եկեղեցու և ամրոցի հարակից տարածքի աղտոտված հողածածկույթի փոխարինում | դրամ | 1 | 48.300,0 | | | | | | | Համահայկական հիմնադրամ | | |
| 20 | Դպրոցներում բակերի աղտոտված հողածածկույթի քիմիական մշակում կամ փոխարինում | դրամ | 1 | 24 150,0 | | | | | | | Համահայկական հիմնադրամ | | |
| 21 | Նոր գերեզմանատեղի կառուցում | դրամ | 1 | 15.000,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | | | |
| 22 | Եկեղեցու գմբեթի կառուցում, վերականգնում | դրամ | 1 | 294.000,0 | | | | | | | Մշակույթի նախարարություն | | |
| 23 | Աղբի տարանջատման և տեսակավորման համար նախատեսված աղբամանների ձեռքբերում | դրամ | 1 | 1800,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | | | |
| 24 | Համայնքում թվով երկու կանգառների կառուցում | դրամ | 1 | 1.000,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | | | |
| 25 | Ռազմավարական ծրագրերի 15-20 տարվա կտրվածքով մշակում և վերահսկում | դրամ | 1 | 1.000,0 | | | | | | Ախթալայի համայնքապետարան | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
